ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№__3604-Ա___ « 02 »սեպտեմբերի2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԻՉ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՎ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 101-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 09.12.2020թ. N 3756-Ա որոշմամբ հաստատված «Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի» 36-րդ կետը.

1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2025 թվականի ընտրանքային չափորոշիչների քանակն ու կազմը և սահմանել ուղղիչ գործակիցներով ընտրանքային չափորոշիչների արժեքները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:
3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
02.09.2025թ.
հ. 3604-Ա որոշման

ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԿԱՉՄԸ

N	Չափորոշչի տեսակը	Չափորոշիչը
1.	Նշանակալիությունը	Ներքին աուդիտի ստորաբաժանումը սահմանում է գործակից՝ ելնելով տվյալ միավորի աշխատանքների՝ կազմակերպության ռազմավարական ծրագրով նախատեսված նշանակությունից (դերից):
2.	Ստացված ֆինանսավորման չափը	Ներքին աուդիտի ստորաբաժանումը սահմանում է գործակից՝ ելնելով տվյալ կազմակերպության նախահաշվում միավորի ֆինանսավորման չափից:
3.	Հայտնաբերված թերացումները	1) Կրկնվող թերությունների հայտնաբերում, 2) կազմակերպության ղեկավարի կողմից նախորդ աուդիտի ընթացքում կատարած առաջարկությունների անտեսում, 3) ռիսկի անտեղի մակարդակի ստանձնում միավորի ղեկավարի կողմից:
4.	Ստացված արձագանքը	Ներքին աուդիտի ստորաբաժանումը սահմանում է գործակից՝ ելնելով կազմակերպությունում տվյալ միավորի գործառույթների վերաբերյալ ստացված բողոքների, ահազանգների և երրորդ անձանցից ստացված տեղեկությունների քանակից և բնույթից: Յուրաքանչյուր բողոքի համար ավելացնելով՝ 0.1 գործակից, իսկ խրախուսանքի համար՝ պակասացնելով 0.1 գործակցով:
5.	Այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքները	Ներքին աուդիտի ստորաբաժանումը սահմանում է գործակից՝ ելնելով այլ մարմինների ստուգման արդյունքների բնույթից (դրական, բացասական):
6.	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքները	Ներքին աուդիտի ստորաբաժանումը սահմանում է գործակից՝ ելնելով միավորի ընտրանքում ընդգրկվելու հանգամանքից:

Ծանոթություն. Կախված տվյալ միավորի կողմից տրված ռիսկի գնահատականներից՝ ռիսկերի վերլուծության նպատակով կիրառել չափորոշիչների գործակիցների 0.5-ից 1.5

միջակայք, բացառությամբ նախորդ տարվա ընտրանքի արդյունքների հիման վրա կիրառվող չափորոշիչին տրված ուղղիչ գործակցի հաստատուն 1.5 արժեքի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**